

Մրցույթի հայտարարություն
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>ՊՈԱԿ
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ի

կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ում

2022 թվականի փետրվարի 9 -ից մինչև մարտի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰ -ից մինչև ժամը 16⁰⁰ -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի մարտի 16-ին՝ ժամը 15⁰⁰-ին,**

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ում,

հասցե՝ 1816 ՀՀ Լոռու մարզ, գ. Հարթազյուղ 6 փողոց, 1 շենք

Տեղեկությունների համար դիմել Սուսաննա Դարչինյանին
Հեռ.՝ 091315801, 098434439

Emil՝ susannadarchinyan0@gmail.com